## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ
## ԳԼԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46*
գ. Գլաձոր, 33փող, 41 շենք
*Նիստ թիվ 6*

*« 26» օգոստոսի 2013 թ .*

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 24

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 15 - րդ հոդվածի պահանջով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝
## ՀԱՍՏԱՏԵԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գլաձոր համայնքի 2013 թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

| ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝ | | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| Գևորգյան | Ռ. | | | |
| Մանասերյան | Ս. | | | |
| Մարտիրոսյան | Մ. | | | |
| Սարգսյան | Է. | | | |
| Սարգսյան | Հ. | | | |
| Վարդանյան | Վ. | | | |

Համայնքի ղեկավար Ա. Մարտիրոսյան

Աշխատակազմի քարտուղար Ս. Օրդոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ
ԳԼԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46*
գ. Գլաձոր, 33փող, 41 շենք

*<u>Նիստ թիվ 6</u>* — *« 26 » օգոստոսի 2013 թ.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 25*

### ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. հունիսի 17-ի թիվ 661-Ն որոշման պահանջներով.

## *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

***Գլաձոր համայնքի 2013թ. բյուջեում կատարել փոփոխություններ***

1. Գլաձորի գյուղապետարանի աշխատակազմի և ենթակա բյուջետային հիմնարկների աշխատակիցների աշխատավարձերի և կոմունալ ծառայությունների գծով 2013թ-ին լրացուցիչ ծախսերը ֆինանսավորելու նպատակով ՀՀ կառավարության 2013թ. հունիսի 17-ի թիվ 661 -Ն որոշման 7-րդ հավելվածի 11-րդ աղյուսակի 43-րդ տողով և ՀՀ կառավարության 18.07.2013թ. թիվ 781 -Ն որոշման 11-րդ հավելվածով Գլաձոր համայնքի 2013թ. բյուջեի եկամտային մասում պետական բյուջեից տրամադրվող /սուբվենցիան/ նպատակաուղղել 967,2 /ինը հարյուր վաթսունյոթ հազար երկու հարյուր/ դրամ աշխատավարձի գծով և 34,2 /երեսունչորս հազար երկու հարյուր/ դրամ կոմունալ ծառայությունների գծով:

2. Ավելացնել գործառնական դասակարգման

01.01.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4111 աշխատողների աշխատավարձի և հավելավճարների հոդվածին 230,0 /երկու հարյուր երեսուն հազար / դրամ,

08.02.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4111 աշխատողների աշխատավարձի և հավելավճարների հոդվածին 51,0 /հիսունմեկ հազար/ դրամ,

08.02.03 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4111 աշխատողների աշխատավարձի և հավելավճարների հոդվածին 140,0 /մեկ հարյուր քառասուն հազար/ դրամ,

09.01.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4637 ընթացիկ դրամաշնորհ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հոդվածին 580,4 /հինգ հարյուր ութսուն հազար չորս հարյուր/ դրամ:

| ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝ | | *Կողմ* | *Դեմ* | *Ձեռնպահ* |
|---|---|---|---|---|
| Գևորգյան | Ռ. | | | |
| Մանասերյան | Ս. | | | |
| Մարտիրոսյան | Մ. | | | |
| Սարգսյան | Է. | | | |
| Սարգսյան | Հ. | | | |
| Վարդանյան | Վ. | | | |

Համայնքի ղեկավար Ա. Մարտիրոսյան

Աշխատակազմի քարտուղար Ս. Օրդոյան